«ԱՐԱՐԱՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ
«ՀՐԱԶԴԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍՏԱԴԻՈՆ

№ 1(302)

# 1990



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ — ВЫСШАЯ ЛИГА

ԽՍՀՄ 53-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻ 5 МАРТА
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ПОНЕДЕЛЬНИК

## «ԱՐԱՐԱՏ» — «ՍՊԱՐՏԱԿ»
(ԵՐԵՎԱՆ) (ՄՈՍԿՎԱ)

## «АРАРАТ» — «СПАРТАК»
(ЕРЕВАН) (МОСКВА)

ԽԱՂԻ ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19-ԻՆ
НАЧАЛО ИГРЫ В 19 ЧАСОВ

footballprogs.net

# ՆՈՐ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՌԱՋ

Երևանի «Արարատը» ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնություններում 32-րդ անգամ է մեկնարկում: Մեկնարկային հանդիպումներում մեր թիմի մրցակիցներն են եղել 16 ակումբներ, ընդ որում բոլորից հաճախ՝ 4-ական անգամ «Տորպեդոն» և «Զենիթը»: Անդրանիկ տուրում մեր թիմը 12 անգամ հանդիպել է մոսկովյան (+2=3—7), 9 անգամ՝ ուկրաինական (+5=3—1) թիմերի հետ: Բացառությամբ 1982 և 1984 թթ-ի, մեր ֆուտբոլիստները մեկնարկային հանդիպումներն անց են կացրել սեփական դաշտում: Հարկ է նշել, որ մինչև 1968 թ. արարատցիներին չէր հաջողվում մեկնարկում հաղթանակ տանել: Բոլորից հաջող մեր թիմը մեկնարկել է 1979—1983 թթ-ին, առաջնությունը սկսելով հաղթանակով: Վերջին երեք տարիներին էլ «Արարատը» սկսել է հաղթանակով, միևնույն՝ 1:0 հաշվով պարտության մատնելով «Մետալիստին», «Ժալգիրիսին» և Մինսկի «Դինամոյին»:

Իսկ ընդհանրապես, մեկնարկային նախորդ 31 հանդիպումներում երևանցիները տարել են 12 հաղթանակ, 10 խաղ ավարտել ոչ ոքի, 9-ում՝ պարտվել: Մեր ֆուտբոլիստները խփել են 31 գնդակ, սեփական դարպասն ընդունելով 30-ը: Այդ հանդիպումներում առավել աչքի է ընկել Ա. Անդրեասյանը, որը խփել է 5 գնդակ: Երեք գոլի հեղինակ է դարձել Խ. Հովհաննիսյանը, երկուական՝ Էդ. Մարգարովը, Ն. Պետրոսյանը, Ն. Ղազարյանը, Ռոբ. Գալստյանն ու Աշ. Խաչատրյանը:

Մոսկվայի «Սպարտակը» առաջնության անդրանիկ խաղը հիմնականում անցկացրել է մրցակիցների դաշտերում: Չնայած դրան, սպարտակցիները լավ ցուցանիշների են հասել (+18=18—15): Հատկապես տպավորիչ է թիմի վերջին տարիների մեկնարկը. «Սպարտակը» 1984 թ-ից սկսած առաջնությունը սկսում է հաղթանակով: Սա խոսում է այն մասին, որ թիմը առաջնության շեմին լավ մարզավիճակում է գտնվում: «Արարատն» ու «Սպարտակը» չորրորդ անգամ են հանդիպում մեկնարկային տուրում: Առաջին անգամ դա պատահել է 1961 թ-ին (0:0): Հաջորդ երկու հանդիպումներում հաղթել են սպարտակցիները (1976 թ., գարուն՝ 1:0, 1984 թ.՝ 2:0): Ինչպիսի՞ ելք կունենա թիմերի հերթական հանդիպումը: Այս հարցի պատասխանը կստանանք այսօր «Հրազդան» մարզադաշտում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բարձրագույն խմբում թիմերի առաջին հանդիպումը կայացել է 1949 թ. հունիսի 10-ին, Մոսկվայում: Ահեղ մրցակցի հետ հանդիպումը երևանցիներն ավարտեցին ոչ ոքի (2:2) արդյունքով: Առաջին խաղակեսում Ս. Սալնիկովն ու Վ. Տերենտևը երկու անգամ գրավեցին հյուրերի դարպասը: Սակայն, երկրորդ խաղակեսում երևանցի ֆուտբոլիստները կարողացան բեկում մտցնել խաղի մեջ և հավասարեցնել հաշիվը: «Սպարտակի» դարպասը խփած առաջին գոլի հեղինակ դարձավ պահեստային դարպասապահ Ալ. Աբրահամյանը, որն այդ օրը հանդես էր գալիս հարձակման գծում: Երկրորդ գոլը խփեց Զալիկյանը: Երկրորդ շրջանի խաղը շահեց «Սպարտակը» (2:1): Սպարտակցիների նկատմամբ առաջին հաղթանակը մեր թիմը տոնեց 1950 թ. Երևանում՝ 2:1. Հարկ է նշել, որ 1949—50 թթ-ի չորս հանդիպումներում իրեն գերազանց դրսևորեց հանրաճանաչ Ն. Սիմոնյանը, որը հինգ գնդակ անցկացրեց երևանցիների դարպասը:

60-ական թվականներին սպարտակցիները նկատելի առավելություն ունեին արարատցիների հետ հանդիպումներում, իսկ ահա 70-ական թվականների «կեսերին ուժերի փոխհարաբերությունը փոխվեց: 1970-1973 թթ-ին մեր թիմը «Սպարտակից» չի պարտվել: Հարկ է նշել, որ վերջին տարիներին «Արարատն» այնքան էլ վատ չի խաղացել «Սպարտակի» դեմ: 1986—1988 թթ-ին երևանցիները «Հրազդանում» հաղթել են մոսկվացիներին, իսկ անցյալ մրցաշրջանում այստեղ գրանցվել է ոչ ոքի (0:0) արդյունք: Ճիշտ է Մոսկվայում էլ, հիմնականում, հաղթել է «Սպարտակը»:

Այսօրվա դրությամբ «Արարատ»—«Սպարտակ» հանդիպումների արդյունքներն այսպիսին են.

Ընդամենը՝ 54 խաղ, +15=16—23, 48—69
Երևանում՝ 28 խաղ, +12=8—8, 33—25
Մոսկվայում՝ 26 խաղ, +3=8—15, 15—44

Այդ հանդիպումներում երևանցիներից բոլորից դիպուկ է գտնվել Ա. Անդրեասյանը, խփելով 7 գնդակ: Սպարտակցիներից աչքի են ընկել Ն. Սիմոնյանն ու Յու. Գավրիլովը՝ 5-ական գոլ: Գործող ֆուտբոլիստներից 3-ական գոլի հեղինակ են դարձել Աշ. Խաչատրյանը, Ֆ. Չերենկովն ու Ս. Ռոդիոնովը, 2՝ Ե. Մելիքյանը, մեկական՝ Ս. Սուքիասյանը, Վ. Շմարովը, Բ. Պոզդնյակովը, Ի. Շալիմովը:

# „СПАРТАК“ МОСКВА

Команда основана в 1922 г. (МКС). Затем играла под наименованиями „Красная Пресня“, „Пищевики“, „Дукат“, „Промкооперация“. Под названием „Спартак“ выступает с 1935 г.

В высшей лиге—с 1936 г. (кроме 1977 г.). В проведенных 1399 матчах +693=373—333, мячи 2387—1411. Двенадцатикратный чемпион СССР, девятикратный обладатель Кубка страны.

Наибольшее число встреч за клуб в чемпионатах СССР провел И. Нетто (367).

Лучший бомбардир клуба в чемпионатах—Н. Симонян (133 мяча).

Рекордсмен клуба за сезон—Н. Симонян (1950 г.—34 мяча).

Один из самых популярных клубов страны в прошлом году преподнес приятный сюрприз многочисленным поклонникам и специалистам футбола. Спартаковцы в 12-й раз завоевали титул чемпиона страны, повторив рекордное достижение киевского „Динамо“. „Спартак“ является своеобразным чемпионом 80-х годов. За это время команда набрала больше всех очков, дважды стала чемпионом страны, пять раз удостоилась серебряных наград, дважды стала бронзовым призером. После ухода К. Бескова, много было разных прогнозов по поводу дальнейшей судьбы команды, мало кто верил в успех „Спартака“. Но к чести спартаковцев и их наставника О. Романцева, команда опровергла всякие прогнозы и блестяще выступила в первенстве. Молодой тренер, в отличие от большинства новых тренеров, приходящих в другие клубы, не стал ломать уже созданное, а поступил мудро: сохранил заложенные Бесковым основы—и игры, изяшной, с многоходовыми комбинациями, и состава, к тому же вернул бывших спартаковцев Черчесова, Морозова, Базулева, Б. Кузнецова, Позднякова, Прудникова, Сочнова. Благодаря Романцева в игре „Спартака“ появились новые штрихи: отработанные элементы коллективного отбора мяча, попытки оперировать длинными передачами, умелый перевод игры в режим, способствующий проведению резких скоростных контратак.

Успех „Спартака“ закономерен. Захватив лидерство с первого же тура, москвичи до конца первенства (кроме 4—5-го туров) не уступили первое место никому. Команда очень ровно прошла всю дистанцию чемпионата, лишь к осени наметился некоторый спад. Но на финише „Спартак“ вновь проявил решительность, волю и довершил дело до победного конца.

В межсезонье в команде произошли значительные изменения. В зарубежных клубах выступят Капустин, Е. Кузнецов, Пасулько. Вероятно, за рубеж уедут также Бокий, С. Новиков, Б. Кузнецов и Базулев. Есть и новобранцы. Из Советской Армии вернулся защитник Градиленко, приглашены Перепаденко из „Черноморца“, Дзаблоев из „Спартака“ (Орджоникидзе), Карпин из „Факела“ (Воронеж) и Тимошенко из минского „Динамо“.

Сегодняшний матч для спартаковцев будет 1400-м в высшей лиге. Поздравляем „Спартак“ с юбилеем.

## ՏՈՒՐԻ ԶՈՒՅԳԵՐԸ

*Մարտի 1-ին «Դնեպր»—«Ռոտոր» հանդիպումով մեկնարկեց ԽՍՀՄ 53-րդ առաջնությունը: Անդրանիկ տուրում կկայանան նաև հետևյալ հանդիպումները.*

| | |
|---|---|
| *ԲԿՄԱ—«Շախտյոր»* | *«Դինամո» Թ.—«Մետալիստ»* |
| *«Գուրիա»—«Ժալգիրիս»* | *«Դինամո» Մ—«Տորպեդո»* |
| *«Պամիր»—«Դինամո» Կ.* | *«Չեռնոմորեց»—«Դինամո» Մն.* |

## ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ — СОСТАВЫ КОМАНД

### «ՍՊԱՐՏԱԿ» — „СПАРТАК"

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| սվ Ստանիսլավ Չերչեսով | 1963 | 73 | — | мс | Станислав Черчесов |
| սվ Վասիլի Կուլկով | 1966 | 30 | 1 | мс | Василий Кульков |
| մկսվ Յուրի Սուսլոպարով | 1958 | 212 | 21 | мсмк | Юрий Суслопаров |
| սվ Բորիս Պոզդնյակով | 1962 | 229 | 8 | мс | Борис Поздняков |
| սվ Գենադի Մորոզով | 1962 | 220 | 4 | мс | Геннадий Морозов |
| սվ Ալեքսանդր Մոստովոյ | 1968 | 56 | 12 | мс | Александр Мостовой |
| Անդրեյ Իվանով | 1967 | 22 | — | | Андрей Иванов |
| սվ Իգոր Շալիմով | 1969 | 50 | 10 | мс | Игорь Шалимов |
| սվ Վալերի Շմարով | 1965 | 78 | 20 | мс | Валерий Шмаров |
| սվվ Ֆյոդոր Չերենկով | 1959 | 333 | 85 | змс | Федор Черенков |
| սվ Սերգեյ Ռոդիոնով | 1962 | 270 | 114 | мс | Сергей Родионов |
| սվ Գենադի Պերեպադենկո | 1964 | 80 | 6 | мс | Геннадий Перепаденко |
| սվ Անդրեյ Տիմոշենկո | 1969 | 49 | 3 | мс | Андрей Тимошенко |
| Դմիտրի Գրադիլենկո | 1969 | 7 | — | | Дмитрий Градиленко |
| Դմիտրի Խլեստով | 1972 | — | — | | Дмитрий Хлестов |
| սվվ Ալեքսեյ Պրուդնիկով | 1960 | 153 | — | змс | Алексей Прудников |

Թիմի գլխավոր մարզիչ՝
մկսվ, ՌՍՖՍՀ վաստ. մարզիչ
Օ Ի. Ռոմանցև

**Главный тренер команды—**
**мсмк, зтр. РСФСР**
**О. И. Романцев**

### «ԱՐԱՐԱՏ» — „АРАРАТ"

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ալ.-դր Պոդշիվալով | 1964 | 146 | — | | Александр Подшивалов |
| Երվանդ Սուքիասյան | 1967 | 34 | 1 | | Ерванд Сукиасян |
| Վարդան Խաչատրյան | 1968 | 49 | — | | Вардан Хачатрян |
| մկսվ Աշոտ Խաչատրյան | 1959 | 327 | 20 | мсмк | Ашот Хачатрян |
| Սարգիս Հովհաննիսյան | 1964 | 41 | 2 | | Саркис Оганесян |
| Գուրգեն Ենգիբարյան | 1964 | 70 | 1 | | Гурген Енгибарян |
| Էրաստ Օսիպյան | 1965 | 64 | 4 | | Эраст Осипян |
| սվ Բաբկեն Մելիքյան | 1960 | 264 | 37 | мс | Бабкен Меликян |
| Սերգեյ Հակոբյան | 1964 | — | — | | Сергей Акопян |
| Վիտալի Աղասյան | 1962 | 42 | 2 | | Виталий Агасян |
| Կարեն Մարկոսյան | 1968 | 48 | 3 | | Карен Маркосян |
| Ալբերտ Սարգսյան | 1963 | 150 | 3 | | Альберт Саркисян |
| Գեորգ Քամալյան | 1965 | 36 | — | | Геворг Камалян |
| Աբրահամ Խաշմանյան | 1967 | 58 | 2 | | Абрам Хашманян |
| Անդրանիկ Հովսեփյան | 1966 | 18 | 2 | | Андраник Овсепян |
| Արմեն Ավագյան | 1962 | — | — | | Армен Авакян |

Թիմի գլխավոր մարզչի պաշտոնակատար՝ մկսվ Ա. Վ. Սարգսյան

И. о. главного тренера—
мсмк А. В. Саркисян

---

Игру судит судья международной категории **М. Ступар** (Ивано-Франковск). Судьи на линии: судья всесоюзной категории **В. Лысенко** (Одесса) и судья республиканской категории **А. Аграновский** (Киев).

---

Издание пресс—центра ФК „Арарат"
Составитель **А. Айрапетян**.

---

Цена 20 коп.

**З. 48** Եր. 988, պ. 2120, տ. 1000 **Т. 5000**
**ООП фирмы „Юнисервис" Ереван—12, ул. Комитаса 27/1**